ՅԱՒԵԼՈՒԱԾ

Հետևեալ յայտարարութիւնը հրատարակելով հարկ ենք համարում ծանուցանել հասարակութեան, որ գեր. Ամբրոսիոս վարդապետ Ռուբինեանի Տփխիսում հաւաքած գումարը հասել է մինչև 4500 ռուբլու, որից 3700-ը արդէն յանձնուել է Մեծ. Պ. Ա. Մանթաշեանին և սոյն ամսագրի խմբագիր պ. Ա. Յովհաննիսեանին, իբրև խնամակալների Կարնոյ նահանգում բացուելիք երկրագործական ուսումնարանի, իսկ մնացած 700 ռուբլին դեռ մնում է ապառիկ։

Ցաւում ենք որ այս համարում, տեղի պակասութեան պատճառով չենք կարող հրատարակել պատուելի նուիրատուների ազգանունները։ «Մեղու Հայաստանի» լրագիրը մաս մաս տպում է ստորագրութեան ցուցակը, իսկ մենք ամփոփ կը հրատարակենք այն Յունիսի համարում։

Նկատելով որ գեր. Հայր սուրբը բաւականին յաջող սկիզբն ունեցաւ Տփխիսում նուէրներ հաւաքելում, մենք հաւաստի ենք, որ և ուրիշ հայաբնակ քաղաքներում կը համակրեն երկրագործական ուսումնարանի գաղափարին, չենայելով իրանց նուէրները, բոլորովին վստահ լինելով որ հաւաքուած գումարը ապահով և անկորուստ տեղ է. (այդ գումարով գնուած տոկոսաբեր թղթերը գետեղուած են «Փոխադարձ Վարկի» բանկայում)։

Արկաւոր ենք համարում աւելացնել միայն որ Ռուսաստանում և Կովկասում հաւաքուած բոլոր դրամը պէտք է ժողովուի Տփխիսում յիշեալ երկու անձանց մօտ, իսկ հանգանակութեան վերջանալուց յետոյ դրամը կը յանձնուի ում հարկն է ուսումնարանը իրագործելու համար։